ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 68
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքը (Կապան քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Կապան համայնքի (Կապան քաղաքի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքը (Կապան քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Սյունիք-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի (Կապան քաղաք) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
09-001-0642-0001 կադաստրային ծածկագրով 0.08519 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողեր	09-001-0642-0001 կադաստրային ծածկագրով 0.08519 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, որից 0.05887 հա մակերեսով հողամասը՝ բնակելի կառուցապատման, իսկ 0.02632 հա մակերեսով հողամասը՝ ընդհանուր օգտագործման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել՝ հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2025 թվականի փետրվարի 18-ի N ԴԽ/14.1/5612-2025 գրությամբ ներկայացված «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության պահանջներն ապահովելու պայմանը (կցվում է):

4. Կապան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Կապան քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Սյունիքի մարզի Կապան համայնքի (Կապան քաղաքի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝	
	Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝	
	Լ.Առաքելյան

Երևան, «26» «փետրարի» 2025 թ.